Սլավիկ Ղազարյան
ՀՖՖ մրցավարական կոմիտեի նախագահ

Դավիթ Արտենյանի «Էլ Կլասիկո »-ն և հայկական «Էլ Կլասիկո »- ն հետազոտական աշխատանքի կառուցվածքը համապատասխանում է ներկայացված պահանջներին, բայց տեքստում բացակայում են համապատասխան հղումները:

Հիմնականում, բայց որոշ թերություններով կարողացել է ներկայացնել ուսումնասիրվող նյութը , վերլուծել և համադրել թեմային առնչվող գրականությունը և կատարել հիմնավորված եզրակացություն:

Թեման շատ արդիական է , քանի որ ֆուտբոլը աշխարհում ամենատարածված սպորտաձևն է ու նաև մեծ թափով զարգանում է Հայաստանում:

Դավիթը շատ գրագետ ձևով անդրադարձել է երկու ակումբների պատմությանը , ցույց տվել ակումբների միջև կոնֆլիկտների առաջացման պատճառները, անդրադարձել հաշտեցման փորձերին…

Շատ լավ է, որ նաև հայկական երկու կարևոր ֆուտբոլային ակումնբներին է անդրադարձ կատարվել:Թեկուզ կան որոշակի անճշտություններ ակումբների հանդիպման քանակի, գոլերի հետ կապված:Ողջունելի է, որ այսպիսի հսկայական թարգմանական աշխատանք է կատարվել:

Դավիթ Արտենյանի հետազոտական աշխատանքը, չնայած նշված բացթողումներին և սխալներին, քրտնաջան կատարված աշխատանք է , արժանի խրախուսման: